ԻՐԱՎԱԿԱՆ ԽՆԴԻՐ 2

ՔՐԵԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԳՐԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ

ՆՅՈՒԹԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Ա) Մարատ Գալստյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ *«նա 2018 թվականի հունիսի 30-ից հուլիսի 8-ը «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ում բուժում ստանալիս նույն կենտրոնի այլ բաժանմունքում բուժման կուրս անցնող Գարուշ Միսկարյանին է հանձնել 93 գրամ ընդհանուր քաշով մարիխուանա տեսակի թմրամիջոց: Այնուհետև՝ երկու օր անց չստանալով վաճառված թմրամիջոցի համար պայմանավորված գումարը, գնացել է Գ. Միսկարյանի հիվանդասենյակ և իր մոտ պահվող բալիսոնգ տիպի դանակով սպառնացել է վերջինիս՝ հետ պահանջելով վաճառված մարիխուանա տեսակի թմրամիջոցը կամ փոխարենը՝ 500.000 ՀՀ դրամ»:*

Բ) Գարուշ Միսկարյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ *«նա 2018 թվականի հունիսի 30-ից հուլիսի 8-ը «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ում բուժման կուրս անցնելիս Մ. Գալստյանից վերցրել է 93 գրամ ընդհանուր քաշով մարիխունա տեսակի թմրամիջոց, և, որպես ի կատարումն նախկինում ունեցած դրամային պարտավորության, այն փոխանցել է նարկոլոգիական կենտրոնի նույն բաժան-մունքի մեկ այլ հիվանդ Մնացական Գասպարյանին»:*

Գ) Մնացական Գասպարյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ *«նա 2018 թվականի հունիսի 30-ից հուլիսի 8-ը «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ում բուժման կուրս անցնելիս անձնական գործածության համար նարկոլոգիական կենտրոնի նույն բաժանմունքի հիվանդ Գ.Միսկարյանից պահանջել և ստացել է 93 գրամ ընդհանուր քաշով մարիխունա տեսակի թմրամիջոց՝ որպես վերջինիս կողմից իր հանդեպ ունեցած դրամային պարտավորության բավարարում»:*

ԱՄԲԱՍՏԱՆՅԱԼՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Մարատ Արամի Գալստյան՝ ծնված 10.01.1974թ., ամուսնացած է, խնամքին ունի անչափահաս որդի (ծնված՝ 12.02.2014թ.), նախկինում դատված չի եղել. ունի բարձրագույն կրթություն, 2015 թվականի նոյեմբերի 7-ին վերջինիս նկատմամբ կայացվել է արդարացման դատական ակտ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքով, բնութագրվում է դրական, ՀՀ քրեական օրենգրքի 117-րդ հոդվածով նախատեսված հանցավոր արարքը կատարելու համար նրա նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով: Նախաքննության փուլում ամբողջությամբ ընդունել է իրեն առաջադրված մեղադրանքը, զղջացել է կատարած արարքի համար, օժանդակել է գործի քննությանը թե՛ նախաքննության փուլում և թե՛ դատական քննության ընթացքում:

Գարուշ Արմենի Միսկարյան՝ ծնված 05.10.1980թ., ամուսանացած է, ունի ամչափահաս երեխա (ծնված՝ 02.10.2012թ.), նախկինում դատապարտվել է ՀՀ քրեական օրենսգրքի 202-րդ հոդվածի 1-ին մասով և 176-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հանագործությունների համար (դատվածությունը հանված կամ մարված չէ): ՀՀ քր.օր-ի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով Դատարանի՝ 2016 թվականի օգոստոսի 22-ի դատավճռով դատապարտվել է 3 տարվա ազատազրկման, որը պայմանականորեն չի կիրառվել և վերջինիս նկատմամբ սահմանվել է փորձաշրջան՝ 3 տարի ժամկետով:

Մնացական Տիգրանի Գասպարյան՝ ծնված 29.08.1981թ., ամուսանացած է, ունի երկու ամչափահաս երեխա, Դատարանի 01.05.1998թ. դատավճռով դատարապարտվել է ազատազրկման, պատժից ազատվել է այն ամբողջությամբ կրելու հիմքով:

ԳՈՐԾԻ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

2018 թվականի հուլիսի 9-ին Մարատ Գալստյանը ներկայացել է Ոստիկանության տարածքային բաժին և ներկայացրել բալիսոնգ տիպի դանակն ու պատմել ամբողջ եղելությունը:

2018 թվականի հուլիսի 11-ին ՀՀ ՔԿ N բաժնում հարուցվել է թիվ X քրեական գործը:

2018 թվականի հուլիսի 13-ին նախաքննական մամնի որոշմամբ Գ. Միսկարյանին և Մ. Գասպարյանին մեղադրանք է առաջադրվել, և նրանց նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը:

Նույն օրը նախաքննական մարմնի մեկ այլ որոշմամբ Մ. Գալստյանին մեղադրանք է առաջադրվել, և նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել ստորագրություն չհեռանալու մասին:

2018 թվականի հուլիսի 30-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան: Ամբաստանյալների նկատմամբ կիրառված խափանման միջոցների հարցը թողնվել է անփոփոխ:

ՄԻՆՉԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԵՏԱԶՈՏՎԱԾ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԸ

Մեղադրյալ Մ. Գալստյանի ինքնախոստովանական ցուցմունքներն այն մասին, որ 2018 թվականի հունիսի 30-ից հուլիսի 8-ը բուժման կուրս է անցել ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ում: Թմրանյութերից ունեցած կախվածությունը չի կարողացել հաղթահարել, այդ իսկ պատճառով բուժանձնակազմից գաղտնի և առանց վերջիններիս թույլտվության, գործով չպարզված անձից 2018 թվականի հունիսի 30-ին գնել և իր մոտ ունեցել է մարիխուանա տեսակի թմրամիջոց: Քանի որ երկու օրով պետք է բացակայեր նարկոլոգիական կենտրոնից և չի ցանկացել թմրամիջոցը իր հետ դուրս տանել, ուստի՝ իր մոտ պահվող 93 գրամ ընդհանուր քաշով մարիխուանա տեսակի թմրամիջոցը փոխանցել է նույն կենտրոնի այլ բաժանմունքի հիվանդ՝ իր ծանոթ Գարուշ Միսկարյանին և խնդրել պահել մինչև իր գալը: Երկու օր անց՝ հուլիսի 8-ին, երբ ինքը վերադարձել է կենտրոն, գնացել է Գ. Միսկարյանի հիվանդասենյակ և հետ խնդրել իր հանձնած մարիխուանա տեսակի թմրամիջոցը, սակայն, ստանալով բացասական պատասխան՝ հանել է իր մոտ պահվող բալիսոնգ տիպի դանակը, մոտեցրել Միսկարյանի կրծքավանդակին՝ սպառնալով կտրել վերջինիս լեզուն, եթե նա չվերադարձնի այդ թմրամիջոցը կամ փոխարենը չվճարի 500.000 ՀՀ դրամ գումար: Իր պահանջը կատարելու համար Գ. Միսկարյանին տվել է երկու օր ժամանակ: Սակայն հաջորդ օրը ներկայացել է ոստիկանություն և պատմել եղելությունը:

Մեղադրյալ Գ. Միսկարյանի ինքնախոստովանական ցուցմունքներն առ այն, որ 2018 թվականի հունիսի 30-ից հուլիսի 8-ը բուժման կուրս է անցել ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ում: Մարատ Գալստյանին ճանաչում է. իր վաղեմի ծանոթն է, ում հետ եղել է մտերիմ հարաբերությունների մեջ: 2018 թվականի հուլիսի 6-ին իր հիվանդասենյակ է եկել Մարատը և խնդրել իր մոտ գտնվող թմրամիջոցը պահել անվտանգ և բոլորի աչքից հեռու մի տեղ, մինչև ինքը երկու օր հետո կգա և կվերցնի այն: Ինքը համաձայնել է: Հաջորդ օրը երեկոյան, երբ ինքն ու նույն բաժանմունքի հիվանդ Մնացական Գասպարյանը ճաշելիս են եղել, ինքը պատմել է վերջինիս, որ իր մոտ առկա է մարիխուանա տեսակի թմրամիջոց: Մնացականը խնդրել է իրեն բաժին հանել այդ թմրանյութից, սակայն ինքը հրաժարվել է՝ հայտնելով, որ թմրանյութը իրենը չէ, այն պատկանում է Մարատ Գալստյանին, ով խնդրել է պահել այն մինչև իր վերադառնալը: Սակայն Մնա-

ցականը կրկին համառորեն պահանջել է իրեն փոխանցել թմրամիջոցի ամբողջ զանգվածը, հակառակ դեպքում խոստանալով այդ մասին հայտնել կենտրոնի բուժանձնակազմին, ովքեր դուրս կգրեն իրեն և բուժումը կընդատվի, իսկ իրավապահ մարմինների հետ խնդիրները կսկսեն: Ինքը չի ցանկացել, որ դուրս գրվի և բուժումը կիսատ մնա, քանի որ այն արդեն արդյունք էր տալիս և ինքը գրեթե ձերբազատվել էր այդ չարաբաստիկ կախվածությունից, իսկ իրավապահ մարմինների հետ առավել ևս չի ցանկացել որևէ առնչություն ունենալ, ուստի ստիպված Մարատի կողմից իրեն փոխանցված թմրամիջոցի ամբողջ չափաբաժինը հանձնել է Մնացական Գասպարյանին: Մնացականի հետ պայմանավորվել են նաև փոխանցված թմրամիջոցի հաշվին մարված համարեն այն դրամային պարտքը, որը առաջացել էր վերջինիցս 200.000 ՀՀ դրամ գումար վերցնելուց: Հաջորդ օրը եկել է Մարատը և հետ պահանջել թմրամիջոցը: Երբ ինքն ասել է որ իր մոտ չէ, Մարատը հանել է իր մոտ պահվող արծաթագույն դանակը, մոտեցրել իր կրծքավանդակին և պահանջել թմրամիջոցը կամ փոխարենը 500.000 ՀՀ դրամ՝ հակառակ դեպքում խոստացել կտրել իր լեզուն: Բայց քանի որ այդքան գումար իր մոտ չի եղել, և նա շատ վախեցած է եղել, խոստացել է ամեն գնով գտնել պահանջված գումարը և տալ նրան:

Մեղադրյալ Մ. Գասպարյան ինքնախոստովանական ցուցմունքներ առ այն, որ 2018 թվականի հուլիսի սկզբներին բուժման կուրս է անցել ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ում: Երեկոյան Գարուշ Միսկարյանի հետ ճաշելիս նա իրեն հայտնել է, որ կենտրոնում բուժվող մեկ այլ հիվանդ նրան է փոխանցել մարիխուանա տեսակի թմրամիջոց: Քանի որ մեծ էր ցանկությունը թմրանյութ գործածելու, ինքը խնդրել է Գարուշին այդ թմրամիջոցի որոշակի քանակ տալ իրեն: Սակայն, երբ ստացել է բացասական պատասխան, զայրացել է և պահանջել Գարուշից իրեն փոխանցել թմրամիջոցի ամբողջ չափաբաժինը՝ հակառակ դեպքում սպառնալով՝ բուժանձնակազմին և իրավապահ մարմիններին պատմել, որ նրա մոտ առկա է մարիխուանա տեսակի թմրամիջոց: Վախենալով այդ ամենից՝ Գ. Միսակյանը իրեն է փոխանցել թմրամիջոցը, միաժամանակ պայմանավորվել են նաև մոռանալ այն պարտքի մասին, որն ուներ Գարուշը:

Մեղադրյալներ Մ. Գալստյանի և Գ. Միսկարյանի, ինչպես նաև Գ. Միսկարյանի և Մ. Գասպարյանի առերես հարցաքննության արձանագրությունները, որոնցով մեղադրյալները հաստատել են նախաքննական մարմնին իրենց տրված ցուցմունքները:

Առարկան ճանաչման ներկայացնելու մասին արձանագրությունը, համաձայն որի՝ Գարուշ Միսկարյանը ճանաչել է թիվ 4 համարի տակ տեղադրված բալիսոնգ տիպի արծաթագույն դանակը և հայտարարել, որ դա այն դանակն է, որով Մ. Գալստյանը նարկոլոգիական կենտրոնում սպառնացել է իրեն և պահանջել մարիխուանա տեսակի թմրամիջոցը կամ փոխարենը՝ 500.000 ՀՀ դրամ:

Փորձագետի թիվ 46-18 եզրակացությունը որի համաձայն՝ փորձաքննության ներկայացված բալիսոնգ տիպի արծաթագույն դանակը հանդիսանում է գործարանային արտադրության հարվածային դանակ, որը սառը զենք է:

Որպես **այլ փաստաթուղթ ճանաչված ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի թիվ 111 գրությունը,** համաձայն որի՝ Մարատ Արամի Գալստյանը, Գարուշ Արմենի Միսկարյանը և Մնացական Տիգրանի Գասպարյանը «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ում գտնվում են հաշվառման մեջ: Հաշվառման հիմք է հանդիսացել տոքսիկոքիմիական փորձաքննությունը, որի արդյունքում նրանց օրգանիզմում հայտնաբերվել են կանաբիս տեսակի թմրամիջոցի թմրալկալոիդներ, և վերջիններս 2018 թվականի հունիսի 30-ից հուլիսի 8-ը բուժման կուրս են անցել «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ում:

Մնացական Տիգրանի Գասպարյանին բերման ենթարկելու և անձնական խուզարկություն կատարելու մասին արձանագրությունը, համաձայն որի՝ ոստիկանության N բաժնի տեսուչ Մ.Մ-ն Մ. Գասպարյանին բերման է ենթարկել և կատարել անձնական խուզարկություն, ում ջինսե տաբատի աջ գրպանից հայտնաբերվել է ստվարաթիթեղ, որում առկա էր 73 գրամ ընդհանուր քաշով դեղնականաչավուն զանգված: Մ. Գասպարյանը հայտարարել է, որ այդ զանգվածը հանդիսանում է մարիխուանա տեսակի թմրամիջոց, որը ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ում իրեն է տվել Գարուշ Միսկարյանը, որից որոշակի զանգված ինքը գործածել է:

Դատաքիմիական և դատաբուսաբանական փորձաքննության թիվ 885 Ք-18 եզրակացությունը, համաձայն որի՝ փորձաքննությանը ներկայացված՝ ստվարաթիթեղի մեջ փաթեթավորված 73 գրամ քաշով դեղնականաչավուն զանգվածը «մարիխուաննա» տեսակի թմրամիջոց է, **որը ճանաչվել է իրեղեն ապացույց:**

ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԵՏԱԶՈՏՎԱԾ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԸ

Ամբաստանյալներ Մ. Գալստյանը, Գ. Միսկարյանը, Մ. Գասպարյանը **պնդել են իրենց նախաքննական ցուցմունքները:**

Դատարանում հետազոտվել են նաև **Մ. Գալստյանի և Գ. Միսկարյանի, ինչպես նաև Գ. Միսկարյանի և Մ. Գասպարյանի առերես հարցաքննության արձանագրությունները, Առարկան ճանաչման ներկայացնելու մասին արձանագրությունը, Փորձագետի թիվ 46-18 եզրակացությունը, որպես այլ փաստաթուղթ ճանաչ-ված՝ ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի թիվ 111 գրությունը, բերման ենթար-կելու և անձնական խուզարկություն կատարելու մասին արձանագրությունը, դատաքիմիական և դատա-բուսաբանական փորձաքննության թիվ 885 Ք-18 եզրակացությունը:**

ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐ

Հարցադրում 1.

Ինչպե՞ս պետք է որակվի Մարատ Գալստյանի արարքը (արարքները): Հիմնավորե՛ք պատասխանը:

Հարցադրում 2.

Ինչպե՞ս պետք է որակվի Գարուշ Միսկարյանի և Մնացական Գասպարյանի արարքները: Հիմնավորե՛ք պատասխանը:

Հարցադրում 3.

Համեմատե՛ք վերոշարադրյալ փաստական հանգամանքները թիվ ՎԲ-135/07 գործի (ՀՀ վճռաբեկ դա-տարանի որոշում) փաստական հանգամանքների հետ (տե՛ս Հավելված 1-ը): Նշե՛ք նմանությունները և տարբերությունները, ինչպես նաև գնահատե՛ք, թե դրանցից որոնք են գործի լուծման համար էականները:

Հարցադրում 4.

Մեկ առ մեկ անդրադարձե՛ք ամբաստանյալ Մ. Գալստյանի անձը բնութագրող հատկանիշներին և գոր-ծի փաստական հանգամանքներին՝ նշելով, թե դրանցից որոնք կարող են գնահատվել որպես մեղմացնող կամ ծանրացնող հանգամանք: Հիմնավորե՛ք պատասխանը:

Հարցադրում 5.

Դատարանը Գ. Միսկարյանի և Մ. Գասպարյանի նկատմամբ ազատազրկման ձևով պատիժ նշանակե-լիս պատժի նշանակման ի՞նչ կանոններ պետք է կիրառի և ինչպե՞ս պետք է որոշի պատժի հաշվարկման սկիզբը (նշե՛ք յուրաքանչյուրի մասով առանձին): Հիմնավորե՛ք պատասխանը:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՀՀ Վճռաբեկ դատարանի ՎԲ-135/07 գործով կայացված որոշման փաստական հանգամանքներ

«(...) Մարտիկ Բոյյանը 2006 թվականի մայիս ամսվա վերջին Ագարակ քաղաքի Մեղրու մաքսակետի տարածքում պարսիկ բեռնատարի վարորդից 200 ԱՄՆ դոլարով գնել է 100 գրամ «ափիոն» տեսակի թմրամիջոց և նույն օրը, պայմանավորվածության համաձայն, տվել է Սաշա Խաչատրյանին: 2006 թվականի հունիս ամսին Մ. Բոյյանը մեկնել է ԻԻՀ Ջուլֆա քաղաք, որտեղ իր ծանոթ Ջաֆարից Ս. Խաչատրյանի խնդրանքով և նրա տված 600 ԱՄՆ դոլարով գնել է 300 գրամ «ափիոն» տեսակի թմրամիջոց: Ջուլֆա քաղաքում Մարտիկ Բոյյանը հանդիպել է իր փեսա Ալեքսան Կարապետյանին, որը Հայաստանի Հանրապետություն տեղափոխելու համար նրան տվել է ևս 200 գրամ «ափիոն» տեսակի թմրամիջոց: Սոխի պարկում թաքցրած 500 գրամ «ափիոն» տեսակի թմրամիջոցը Մ. Բոյյանը ԻԻՀ-ից Մեղրու մաքսակետով՝ թաքցնելով մաքսային հսկողությունից 2006 թվականի հունիս ամսվա սկզբին տեղափոխել է Հայաստանի Հանրապետություն: Ագարակ քաղաքում 300 գրամ «ափիոն» տեսակի թմրամիջոցը նա հանձնել է Սաշա Խաչատրյանին, իսկ 200 գրամը պահել է իրենց տանը: (...)»: